ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2023 թվական թիվ 228-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՐԿՈՒ ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին, որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն համարվող, Ախուրյան և Ազատան բնակավայրերի տարածքներում գտնվող թվով երկու կտոր հողամասերը՝ կառուցապատելու, առավել արդյունավետ պահպանելու և նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով, դասական աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել հողամասերի օտարման մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

2.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերն ըստ լոտերի օտարելու նպատակով, կազմակերպել հրապարակային սակարկություն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -22 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԱՅՎԱԶՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ՉԱԼՈՅԱՆ
Ս. ՍԻՄՈՆՅԱՆ

Մ. ՄԱԹՈՍՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

21 դեկտեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի
ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 228-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԿԱՑԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿՆ ԸՍՏ ԼՈՏԵՐԻ

Լոտի համարը	Հողամասի տվյալները					Օգտագործման նպատակը	Գրանցված սահմանափակումները	Մեկնարկային գինը (դրամ)
	Գտնվելու վայրը	Կադաստրային ծածկագիրը	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը/հող ատեսքը	Մակերեսը (հեկտար)			
1.	Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի, 27/1	08-007-0632-0023	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատման	0,0344	Հասարակական նշանակության շինություն կառուցելու համար	Չկա	450000
2.	Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ազատան	08-004-0502-0019-ից	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատման	0,45	Հասարակական նշանակության շինություն կառուցելու համար	Չկա	5545000